

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՅԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՏԱՆԻ ԹԵՄ

Նոյեմբերի 27-30-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրինաբեր հայրավերական այցը կատարեց Հարավային Ռուսասփառի հայոց թեմ: Այցն անմիջապես հաջորդում էր նոյեմբերի 26-ին, Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք Ալեքսի Բ-ի հրավերով Մոսկվայում կայացած Կովկասի կրոնական առաջնորդների՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Համայն Վրասրանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի և Կովկասի մուտքմաների վարչության նախագահ Շեյխ-ուլ-խալամ Ալիաշուրյուր Փաշա-զադեի քառակողմ հանդիպմանը, որը նվիրված էր Կովկասյան գորածաշրջանում խաղաղության ամրապնդման և միջկրոնական համուրժողականության զորացման խնդիրներին: Այս հանդիպումից հետո Հայոց Հայրապետի եռօրյա այցը Հարավային Ռուսասփառի թեմ դարձավ Կովկասյան ժողովուրդների հին ու նոր բարեկամության ևս մի կենդանի վկայություն. Վեհափառ Հայրապետը Հյուսիսային Օսերիայի մայրաքաղաք Վլադիկավկազում իր մասնակցությունը բերեց Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու 160-ամյակի հոբելյանական գոնակարությանը, Պյափիգորսկ քաղաքում, ձևամբ Նորին Սրբության, կարարվեց Ս. Սարգիս նորակառույց եկեղեցու օծումը:

«Դարավոր սիրո ու փոխըմբռման հարաբերություններ»

Նոյեմբերի 27-ին Ամենայն Հայոց Հայրապետը Մոսկվայից ժամանեց Սպավրոպոլի երկրամաս: Վեհափառ Հայրապետի շքախմբում էին Արքայի թեմի առաջնորդ Տ. Պարզեանը, Մարտիրոսյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջնկենեցական հարաբերությունների քածնի պարասխանափոր Տ. Եղիշիկ Եպս. Պետրոսյանը, Նոր Նախիջևանի և Ռուսասփառի հայոց թեմի առաջնորդ Տ. Եղրաս Եպս. Ներսիսյանը և Տ. Մեսրոպ արդ. Պարտամյանը՝ որպես զավագնանակիր:

Մինվողի օղանավակայանում Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեցին ավանդական առ ու հացով: Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկեղեցակային Ռուսասփառի հայոց թեմակալ առաջնորդ Տ. Մեսրոպ Եպս. Մովսիսյանը, թեմի հոգևոր դասը: Հայ համայնքի հոգևոր և աշխարհիկ եերկայացուցիչների կողքին էին նաև Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սպավրոպոլի և Վլադիկավկազի հոգևոր առաջնորդ Ֆեռնան Եպիսկոպոսը, Սպավրոպոլի երկրամասի փոխնահանգապետ Վիքայի Միջնակոնին, Պյափիգորսկի քաղաքապետը, Հարավային Ռուսասփառում Ռ գլխավոր հյուպալոս Արարաք Գոմցյանը:

Իր բարիգալսպյան խոսքում Ֆեռնան Եպիսկոպոսը մասնավորապես նշեց. «Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Սպավրոպոլի հինավոր երկրամաս ուրահություն է ոչ միայն ուղղափառ հայ հավաքացյալների, այլև Ռուս Ուղղափառ Եկեղեցու զավակների համար:

Զիշ առաջ, երբ ինձ հարցնում էին, թե ինչպիսին են հարաբերությունները Ռուս Ուղղափառ և հինավորց Հայ Ուղղափառ Եկեղեցիների միջև, ես պարագանեցի՝ 1000-ամյա սիրո և փոխըմբռնման: Այդպես եղել է, այդպես կա ու այդպես կլինի:

Նորին Սրբությունը շնորհակալություն հայութեաց այս ազնիվ խոսքերի և ջերմ ընդունելության համար՝ աղոթելով Ռուսաստանի ժողովրդի բարօրության ու քոյր Եկեղեցիների եղբայրության գորացման համար:

Հաջորդ օրը, առավորյան, Վեհափառ Հայրապետը մեկնեց Վաղիկավկազ՝ մասնակցելու Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական Եկեղեցու օծման 160-ամյակի փոնակապարությանը:

«Վաղիկավկազի հայոց Եկեղեցին բարեկամության ու փոխադարձ սիրո կենդանի վկայություն է»

Գարեգին Ք

Հյուսիսային Օսեթիայի սահմանագլխին Վեհափառ Հայրապետին ղիմավորեցին հանրապետության Ազգությունների գծով նախարար Սերգեյ Տարուլովը, Մշակույթի նախարար Ա. Չերդմինը, Ներքին գործերի փոխնախարար Ս. Մ. Մասուլովը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ հայր Վաղիմիրը և Օսեթիայի մահմեդականների առաջնորդը: Այսինից ավարտականուն ուղղվեց դեպի Վաղիկավկազ:

Հայոց Հայրապետի առաջին հանդիպումը Վաղիկավկազում Հյուսիսային Օսեթիայի նախազան Ալեքսանդր Չաստիուվի ենք եք: Հանդիպումից հետո Ամենայն Հայոց Հայրապետը շքախմբով, Ալ. Չաստիուվի ընկերակցությամբ, ուղղվեց դեպի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի:

Արմյանսկայա փողոցի վրա գրինվող Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցին Վաղիկավկազի հենագոյն Եկեղեցիներից է, որի օծումը կարարվել է 1843 թ.: Ավելի քան մնկուկեսհարյա պարագաներու ունեցող Եկեղեցին սկզբնապես փայտաշեն է եղել: Այս փայտաշեն բաճարում 21 տարի շարունակ իր աղոթքն էր առ Աստրած բարձրացրել Թերերի ափերին արմադիներ ձգած դեռևս նոր կազմավորվող ու փոքրաթիվ հայ համայնքը: Երկու փասնամյակ անց, սակայն, արդեն մեծարիվ համայնքն առավել ընդարձակ աղոթարան կարիք ուներ, առավել ևս, որ բազմազգ Վաղիկավկազում հայոց Եկեղեցին պաշտելի սրբավայր էր դարձել ոչ միայն հայերի համար:

Այն ժամանակ, 1862 թվականին, Աստրախանի հայոց թեմը, որի կազմում էր Վաղիկավկազը, նոր քարակերպ Եկեղեցի կառուցելու հարց է բարձրացնում: Խակ արդեն 1864 թ. ճիշդ նույն վայրում, ուր փայտաշեն Եկեղեցին էր, Սիմենս անունով ճարպարապետը սկսում է Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու նոր շենքի կառուցումը: Շուրջ վեր է հառնում հնգանակ բազիկի Եկեղեցին՝ զավիթով և զանգակապնով: Եկեղեցու կառուցման գործում մեծ էր ավանդը Միջայի Լորիս-Մելիքովի՝ Լորիս Մելիքյաններ հայկական ազնվական գոհումի ականավոր ներկայացուցիչ, որը 1860-1873 թթ. նշանակված էր Թերերի կառավարիչ: Լինելով կրթական գործի մեծ ջարգով, Լորիս-Մելիքովը Եկեղեցուն կից հիմնում է նաև ծինական դպրոց: Շաբ շուրջով Եկեղեցին դառնում է հոգևոր ու մշակութային կենտրոն:

ԱՐՄԵՆԻԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԿԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՐԱԿԱՆ



ՆՎՊՐԵԿԱՊՐԵՆԱՌԱՀԻ ԿԵՆԱՎՈՅՈՑ ԴՎԱՅՈՎՈՒՄԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Հոգ ԿՄ ԽՍՓՍ ՂԱԽԱՆԱԳԻՆ ՂԱԽԱՆԱԳԻ ՊԱՍՎԱՐԻ Ն ՂԱՄԱՆԱՍՈՒ ԽՈՎՈՎԱՐ ՎԵՐԱԲՐԱՋ ՂԱԽԱՆԱԳԻ ՎԵՐԱԲՐԱՋ ՂԱԽԱՆԱԳԻ ԽՈՎՈՎԱՐ



Երջանիկ բարեբախստությամբ, թե Ասքծո կամոք, Ս. Գրիգոր Լուսավորիչ և կեղեցին 160 դարիների ընթացքում, շրջանցելով անզամ խորհրդային բարիների անապահության պարպահանքը, իր դռները միշտ բաց է պահել հավաքացյաների առջև: Այսօր էլ, անճշտմար փոփոխություններով, կանգուն է եկեղեցին: Վերջերս բարեկարգվել է եկեղեցու շրջափակը: Եկեղեցուն կից կրկին գործում է կիրակնօրյա դպրոց:

Նոյեմբերի 28-ին, Վաղողիկավկազի հայոց եկեղեցու 160-ամյա հորեւյանի փոնակադարությանը մասնակցելու ու Վեհափառ Հայրապետի օրինությունը պահապու համար, այսինքն էին եկեղեցու միայն Վաղողիկավկազի, այլև շրջակա բնակավայրերի հայ հավաքացյալները:

Վեհափառ Հայրապետը շնորհավորեց բոլոր ներկաներին այս հորեւյանի առիթով՝ հետևող իր հայրապետական պատգամն ու օրինությունը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՇԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՎԱՐԴԻԿԱՎԿԱՁԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Միրեցաւ եղբայրներ և քոյրեր,

Ասքծո ողորմածությամբ Մենք այսօր գրնկում ենք պատրիարքան հողում Արանների երկրի և հոգու անհուն բնորդանքով մասնակից ենք Վրաղիկավկազի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու 160-ամյակի լրոնակաւրարություններին:

Պատմությունը շատ կարևոր տես է զրադեշնում մեր երկու փոքր ժողովուրդների կյանքում: Մենք խորապես գնահարում ենք և այսօր անկեղծ ուրախությամբ ենք հիշարքակում այն պատրիարքան առնչությունները, որ ունեցել են մեր նախնիները՝ սկսյալ հայոց Արքաշեն թագավորի և աղանաց Սաթենիկ արքայադաւեր ժամանակներից: Առաջին դարում, երբ Քրիստոսի առաջալները քարոզում էին Հայաստանում, անմիջապես նրանց աշակերտներից Սուրբ Ավելիարանի քարոզությունը լսեցին աղանաց իշխանները, ովքեր արդեն հայոց թագուհի դարձած Սաթենիկի հետ եկեղեցին էին Հայաստան: Նրանք ընդունեցին քրիստոնեություն և ի սեր Քրիստոսի նահարակվեցին հայոց հողում՝ դառնաւով Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու առաջին նահարակներից՝ Ս. Սուքիայանը ընդհանուր անունով: Արանների երկրում նաև Եկեղեցու եպիսկոպոսները քրիստոնեություն են քարոզել 6-7-րդ դարերում: Նոր ժամանակներում ավելի սկզբանց մեր ժողովորդի հարաբերությունները հիշարքակներով հարուստ այս երկրամասի հներ: 18-րդ դարից սկսյալ հայ ժողովորդի բազմաթիվ զավակներ իրենց երկրորդ հայրենիքը գրան Ռուսական Կայսրությունում և մասնավորաբար՝ Շուսիսիային Օսմանական՝ մշտապես զգալով պետքական իշխանությունների հոգածությունը, ուսև և օս ժողովորդների եղբայրական սերը:

Իր բազմադարյա պատմության ընթացքում հայ ժողովորդին մեկ անգամ չէ, որ վիճակված է եղել ապրել հեռու հայրենիքից, ուրիշ ժողովուրդների կողքին: Այս հուրլանկալ հողում էլ մեր ժողովորդի զավակները գրան իրենց նոր հայրենիքը,

հիմնեցին իրենց համայնքները՝ համերաշխ ապրելով մյուս ժողովուրդների հետ. իրենց ջանքերը բերելով երկրամասի սրբածառործ լցանքին: Տավարի մեր Շոր՝ Սուրբ Գրիգորի անունով օծված այս եկեղեցին, որ դարձել է համընդհանուր աղոթքի տուն ոչ միայն հայ քրիստոնյաների, այլև օսկրի, ուստի և այլոց համար, վկան է ժողովուրդների բարեկամության: 160 տարի այս տաճարից աղոթք է բարձրացել երկինք՝ լսելի Ասրծոն, ինչ լեզվով էլ որ հնցի: Տիրամի, մեկ Ասրծոն զավակները լինելու գիրտակցությունից ծնունդ առնող սիրո և փոխադարձ հարգանքի համակրոնական արժեքներն են երաշխավորը տարբեր ժողովուրդների համակեցույթյան՝ բազմազգ ու բազմակրոն աշխարհի տարբեր երկրներում:

Մենք զիվենք, որ Վլադիկավկազի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին արծանացել է նաև Վլադիկավկազի մասներական բնակչության հարգանքին:

Եկեղեցու օծման հորելյանի հանդիսավոր գոյնակարության պոհովով Մենք ողջունում ենք Վլադիկավկազի բոլոր բնակիչներին և քերում ենք Տայրապետական Սեր օրինությունն ու բարեևաղթանքները: Զերմորին ողջունում ենք և օրինում Ծուսիսային Օսեթիայի նախագահ մեծապատիկ Ալեքսանդր Չաստիովին և Վլադիկավկազի քաղաքապետ Միխայիլ Շարալովին:

Տայրապետական սիրով Մեր օրինությունն ենք քերում Ծուսիսային Օսեթիայում ապրող մեր ժողովուրդի բոլոր զավակներին և Մեր գնահատանքը՝ Տարապային Ռուսաստանի հայոց թեմի բարեզան ու քաջեռակ առաջնորդ Գերաշնորհ Տ. Մովսես Կայիկոպոս Մովսեսյանին: Տայրապայնայց Առաքելական Եկեղեցու Տարապային Ռուսաստանի թեմ հայրապետական Մեր այցը մեծագոյն խնդության առիթ պարզեց Մեզ: Բարեկարն Ասրծոն կամոք այսօր արժանացանք մասնակից լինելու հայոց դարավոր այս եկեղեցու օծման հորելյանական տունին:

Միշելի բարեպաշտը ժողովուրդ, Ձեզ ենք քերում Ս. Էջմիածնի օրինությունը և աղոթք ենք բարձրացնում առ Ասրծած, որպեսզի Ս. Տոգին Իր շնորհներով այս եկեղեցու խնձորությունը հարկից ներս միշտ հովանի լինի հավաքացյալներին՝ անկախ նրանց ազգությունից ու կրոնական պատկանելությունից:

Ես թող փառավորվի Մեր Տեր Տիտոս Քրիստոսի անունը համիլդյան հավերենից ամեն:

Նոյն օրը, հորելյանական գոյնակարությունից հետո, գեղի ունեցավ նաև հանդիսավոր երեկո, որին ներկա էին և Տարապային Օսեթիայի նախագահ Ա. Չաստիովը, և Վլադիկավկազի քաղաքապետ Մ. Շարալովը:

Ս. Սարգիսը՝ Պյատիգորսկի 6-րդ բարձունք

Ամենայն Տայրապետի այցի հաջորդ օրը՝ նոյեմբերի 29-ը ևս եիշարժան դարձավ Հարավային Ռուսաստանի թեմի հայ հավաքացյալների համար: Այդ օրը Ամենայն Տայրապետիկոսը մեկնեց Պյատիգորսկ՝ օծելու Ս. Սարգսի նորակառույց եկեղեցին: Օճման սրբազն արարողությանը ներկա էին Սրբավորության փոխնահանգապետ Վ.

ԱՐՄԵՆԻԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԻՃԱԿ





ԿԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈ ՈՒԽՍ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՏԱՎՐՈԹՈՒՆ ՈՒ
ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻ ԱՌԱՋՈՐԴ ՖԵՈՖԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ
ԲԱՐԵՐԱՐՆԵՐ ԻԳՈՐ ԱՎԱՆԵՍՅԱՆԻ ՈՒ ՌԱԶՄԻԿ ԱՐԱՅՅԱՆԻ ՀԵՏ

Միխայիլենկոն, Հարավային Ռուսասփառնում ՀՀ գլխավոր հյուպաքոս Ա. Գոմբցյանը, Համաշխարհային Հայկական Միության նախագահ Ա. Արքահամյանը, գեղի իշխանությունների, ՌԴ գրադեր համայնքների ներկայացուցիչներ, պետական-հասարակական գործիչներ, Հայասփանի և Ռուսասփառի ճանաչված միավորականներ:

Տարիներ առաջ, երբ դեռ կանգուն չէր եկեղեցին, ու ընթացքի մեջ էին շինարարական աշխարհները, այցելելով՝ Պյատիգորսկի եկեղեցու շինհրապարակ՝ երջանկահիշաբակ Գարեգին Ա Կաթողիկոսն ասաց. «Պյատիգորսկ» նշանակում է հինգ լեռների քաղաք, սակայն ևս այսօր այս քաղաքը անվանում եմ «Շիստիգորսկ», որովհետք ևս բերել եմ նաև վեցերորդ լոռ՝ Սուրբ Էջմիածինը՝ հավաքրի լեռը մեր ժողովրդի»:

Այս միփրը վերահասփառեց Գարեգին Բ Կաթողիկոսը՝ սրբազնություն Ո. Սարգիս եկեղեցին: Ինչպես նշեց Ամենայն Հայոց Հայրապետը, Ս. Սարգիսը, որի հիշաբակը կապված է Կովկասում քրիստոնեության փարածման հետ, հաղորդակից է դարձնում հոգիներն ազնիվ ու մաքուր միաձումների՝ օգնելու կարիքավորին, լինի նա ուղարկած, մահմեղական կամ մեկ այլ կրոնի հավաքրացյալ:

Ս. Սարգիս եկեղեցում շուրջ երկու ժամ տևած օժման արարողությունից հետո՝ մագուցվեց անդրանիկ Ս. Պատրարքը:

«Ընթացս սրբազն արարողության ներկաներին իր խոսքն ուղեց Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայդնեց Ռուսասփանի Հայերի Միության Սպավրոպոյի մարզային կազմակերպության նախագահ Ռազմիկ Վրամյանին, մովկահայ ճանաչված գործարար Իգոր Ավանեսյանին, Հարավային Ռուսասփառի հայոց թեմի Սպավրոպոյի մարզի փոխառաջնորդ Տեր Վրամ քահանա Շունանյանին՝ եկեղեցու կառուցման գործում ներդրած ջանքերի համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՊՅԱՏԻԳՈՐԾԿԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕՇՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆՆԵՐ

«Եկայք շինեացուք սուրբ զիտրանն լուսոյ»:

Միրելի բարեպաշտ հավատացյալներ,

Հավատո՞ւ մեր Շոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մեր Հայրապետի այս պատգամը հաղթանակած թևածում է այսօր այսուհետ, նորակառուց հայկական եկեղեցու կամացների ներքո:

«Եկեղ կառուցենք լուսի Ս. Խորանը»:

Այս հրավերով 1700 տարի առաջ Արարատի դիմաց, Միաձնի Էջքի գրադում, կառուցվեց հայոց Մայր Տաճարը, որի Կանթենի լուսից դարեւը շարունակ իրենց լուսն առան հայոց եկեղեցիները աշխարհի բոլոր կողմներում: Այսօր գոհություն և փառք ներ մակարուցում Աստծուն, որ Լուսավորչի Կանթենի լուսով, ձեր հոգիներում Միաձնի Էջքի գեւսիլուվ հայկական ևս մեկ եկեղեցի իր օրհնության դոներն է բացում Պյատիգորսկ քաղաքում:

Լուսահոգի մեր նախորդ Տայրապետը, երբ լրակավին եկեղեցու շինարարության ընթացքում այցելում է Պյատիգորսկ և տեղեկանում է, որ քաղաքի անոնք թարգմանվում է հինգ բարձումք, ասում է, որ քաղաքի կամքում կառուցվում է վեցերորդ բարձումքը, որը լինելու է հայոց եկեղեցին: Արդարև, Տերունական Սուրբ Խաչը դեպի վեր պարզող, մեր աղոթքները երկինք բարձրացնող նվիրական բարձումք է եկեղեցին, որը ձեր հավատի զորությամբ պիտի դառնա Այլակերպության՝ պայծառակերպության Թաքոր լն:

Սուրբ Սարգիս եկեղեցին, ինչպես հայոց բոլոր եկեղեցիները, պիտի դառնա ձեր ասրբածապարզն շնորհների և լրադարձների գանձարանն ու շրեմարանը: Այս խորաններից լոյս պիտի հորդի ձեր հոգիներից ներս՝ հոյսով ու սիրով շաղախելով ազգային-եկեղեցական ձեր կյանքը: Եկեղեցին նաև կատուրջն է դառնալու ձեռ՝ այս դեռ՝ Ռուսաստանում ապրող հայության և մեր նվիրական Տայրենիքի միջն: Եկեղեցիով է, որ Ռուսաստանի օրինյալ հովի վրա պիտի ապրներ և հարապես որպես հայու զավակներ, արժանի ժառանգորդներ մեր նախույաց ու հայրերի, որոնց հավաքով ու նվիրումով կերպվել է բարեկամությունը հայ և ուս ժողովուրդների ու դիմացել ժամանակի բոլոր փորձություններին: Զաղցը են բարեկամության պարուները, որի վկայությունն է նաև նորակառուց այս եկեղեցին: Մենք հավաքում ենք, որ դուք, համախումք Սուրբ Սարգիս եկեղեցու շուրջ, հավատավոր ձեր կյանքով ու զործով նոր վկայություններ եք հավելելու սրբազն այդ բարեկամությանը, որն իբրև թանկ ժառանգություն փոխանցվել է ձեզ՝ այն ամրացնելու և զորացնելու պատվի հետ միասին:

Միրելի բարեկաչի հայորդներ, ամենքին համար ցնծակի օր է այսօր, երբ լրենում ենք զարթյալ մեր հավաքը և հայրենասիրությունը: Զարթյալ՝ ինչպես Ռուսաստանում ապրող հայության սրբերում, այնպես և՝ համայն աշխարհասիյուն մեր ժողովրդի: Եր զավակներով է պայծառ Սուրբ Էջմիածինը, իր զավակներով զորել՝ Մայր Տայրենիքը: Ուր էլ ապրենք՝ զավակներն ենք մեր հետագոյն Տայրենիքի ու հոգնոր մեր Տայրենիքի՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու: Ամուր պահեք ձեր հոգու մնջ հավաքն առ Աստված և հայրենյաց արժեքները, որպեսզի հավելժական լինի մեր ժողովրդի ընթացքը, և մեր ճանապարհները՝ օրինակած: Ասդու ողորմնության շնորհով ապրել ենք ու կանք, Աստծոն ապավինած հաղթակարել ենք մնաց բաժին լընկած աննեն փորձություն և հաճախ հարություն ենք առել մոխրեներից: Ուրեմն, Աստծո հետ մեր հաղթության պատկը միշտ բաժինը դարձնեք մեր ժողովրդի: Դարձրեք յուրաքանչյուրդ ձեր կյանքի պատկը՝ հյուսված հոգեոր-ազգային մեր արժեքներով, և Աստված կօրինի ձեզ՝ անհապական ձեր կյանքում, և Աստված կօրինի մեզ՝ հայրենական մեր կյանքում: Այս աղոթքով ու մատրանքով պարզաւում ենք ձեզ, սիրելի զավակներ մեր Սուրբ Եկեղեցու, փարուած մնացեք մեր հայրերի սուրբ հավաքին և ձեր հայացքը միշտ ուխտավ պահեք Տայրենիք գրանող ճանապարհներին: Թող ձեր հոգում միշտ բարձրորն ենչի Տավագի մեր Տոր՝ Սուրբ Լուսավորչի պարգամը՝ «Եկեք կառուցներ լոյսի Ս. Խորանը»: Թող միշտ կանգուն լինի ու բազմամարդ Աստվածային Լոյսի այս



ՆՈՐԱՅԻ Ս. ՄԱՐԳԻՒ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ ՎԵՐԱՓԱՌ-ՀԱՅՐԱՊԵՏԸ
ԾՐՁԱՊԱՏՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՒԹԱՅԵՐՄ ԲԱԶՄՈՒԹՅԱՆԻՔ



Եկեղեցական Պատրիարքական Վահագության 8 ամ պատճենաթուղթ Կանոնադրությունը Ավագ



նորած Խորանը՝ Սույր Սարգիս եկեղեցին՝ օրհնություն հավելելով ուստաց հոդին, ուստահայոց կյանքին, զորություն ու արզասավորություն հավելելով հայուսական բարեկամությանը, որն աչքի լույսի պես պահպանել են մեր նախնիները:

«Այրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք թերում ամենքիդ, Մեր բարձր գնահատանքը՝ Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ սիրելի Մովսես Սրբազնին և նրա առաջնորդության ներք՝ թեւում սպասավորող հոգևորականներին»:

Ամփոփելով իր խոսքը, Նորին Սրբությունը որպես գմահարանք՝ ավագ քահանայության պատվին արժանացրեց Պյափիգորսկի հոգևոր հովիվ Տ. Վրամ քին. Շունանյանին՝ զարդարելով նրա կուրծքը քահանայական լանջախառով, իսկ Մովսես Սրբազնին նվիրեց արձարյա սկիհ:

Եկեղեցու օծման առիթով շնորհավորանքի խոսքը ասացին նաև արարողությանը ներկա Սրբավորությանը մարզի փոխնահանգապետ Վիլֆալի Միհսայիլենկոն, Համաշխարհային Հայկական Սիության նախագահ Արա Վրրահամյանը, ՌԴ Հարավային մարզերում ՀՀ հյուպատոս Արարափ Գոմբյանը: Իսկ Սրբավորությի և Վլադիկավկազի հոգևոր առաջնորդ Ֆեռֆան Եպիսկոպոսը փոխանցեց Մովսեսի և Համայն Ռուսիայի Ալեքսի Բ Պատրիարքի մաղթանքը՝ նշելով, որ բոլոր կրոնների ձգբումն է համերաշխությունը, սերն ու խաղաղությունը: Ռուս Եպիսկոպոսը նորակառույց Եկեղեցուն նվիրեց Վարդապատոր մի սրբանկար՝ Վարդապատությամբ, որ աղոթարար հավաքացյալին այն մշտապես հիշեցնելու է հայ և ռուս ժողովուրդների ու Եկեղեցիների նդրայրության մասին:

Այդի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն առանձին հանդիպում ունեցավ նաև Ֆեռֆան Եպիսկոպոսի հետ, որի ժամանակ քննարկվեց այն հարցը, թե կարածաշրջանի հրադապատ խնդիրների լուծմանն ինչ համարել նպաստ կարող են քերել Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական Եկեղեցիները:

Պյափիգորսկում Նորին Սրբությունն այցելեց նաև Սրբավորությի շրջանի № 8 հայկական ղպրոց: Իր օրհնությունը բարով դպրոցականներին՝ Վեհափառ Հայրապետը ծանոթացավ ղպրոցի առօրյային, պատմությանը, դիմեց երեխանների ձեռքի աշխարհանքների ցուցահանդեսը:

Նոյեմբերի 30-ին, ավարտելով այցը Հարավային Ռուսաստանի հայոց թեմ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Մայր Աթոռ Աջմիածին:

ՇԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ